

## Ն Ա Ի Ա Կ

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԿԵԼԵԱՆՑԻ

2070

Վազի՛ր, իմ նաւակ, հասի՛ր ծովափին՝  
Սլեքի կուրծքը պատառոտելով.  
Այնտեղ թո՛ղ հանգիստ գըտնեմ վերըստին՝  
Իմ տառապահնքը ծովին լանձնելով:

Իմ շուրջը խաւար, ահռելի գիշեր,  
Հողմերի սաստիկ ահեղ մըռընչիւն.  
Չորս կողմըս ջըրեր և անվերջ ջըրեր,  
Չորս կողմըս անհուն սև տարածութիւն:

Բայց այնտեղ, հեռու, աստղիկի նըման  
Փալլում է մի լոյս պայծառ ու մենակ.  
Այն նալում է մեզ փարոս փըրկութեան—  
Վազի՛ր գէպի նա, սիրո՛ւն իմ նաւակ:

Թո՛ղ մըռընչելով սև ալիքները  
Սոսկալի անդունդ բանան առաջիս.  
Թո՛ղ խաւարի մէջ վալրագ հողմերը  
Սպառնական ձալնով սուլեն ականջիս: —

Դեռ լոյս ունիմ ես սըրտումըս պահած,  
Որ միշտ ինձ առաջ առաջ է տանում.

Եւ քանի նա կալ, քանի չէ մարած,  
Ոլժ կալ վարելու և իմ ձեռքերում:

Եւ խաւարը չէ յաւիտենական,  
Յաւիտենական չէ ալէկոծում.

Ես հաւատում եմ արևի ծագման,  
Ես հաւատում եմ ծովի հաշտւելուն:

Բաղձալի ափին կը հասնեմ շուտով,  
Շուտով կը տեսնեմ սիրելի դէմքեր.  
Եւ նոքա անկեղծ, ուրախ ողջունով  
կը լուսաւորեն մըռալլ իմ պատկեր:

Վազի'ը, իմ նաւակ, հասի'ը ծովափին՝  
Ալիքի կուրծքը պատառոտելով.  
Այնտեղ թո՛ղ հանգիստ գըտնեմ վերըստին՝  
Իմ տառապանքը ծովին յանձնելով:

Մօնկուա. 1888 թ. հոկտեմբ. 20-ին